

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԴԱՆԻԵԼՅԱՆ ԳԱԳԻԿ ԳԱՌՆԻԻ**

**ԱԼ-ՄԱԿՐԻԶԻԻ KITĀB AL-SULŪK ԵՐԿԸ ԿԻԼԻԿՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ 1250-1310 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐ  
(ԱՂՐՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Է.00.05. «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂՐՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2015**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Ա. Ա. Բոզոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյան

պ.գ.թ. Վ. Ա. Տեր-Ղևոնդյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 30-ին, ժամը  
13:00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ  
ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական  
խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝



պ.գ.թ. Ռ. Պ. Ղազարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության թեման և նրա արդիականությունը:** Կիլիկյան Հայաստանի պատմության գիտական հետազոտությունն ավելի քան երկդարյա վաղեմություն ունի: Գիտական հետազոտության բեղուն ավանդույթներ ունենալով՝ Կիլիկյան Հայաստանի պատմության բազմաթիվ ծայքեր դեռևս շարունակում են անմշակ մնալ: Այս աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրողների ուշադրությունը վերստին հրավիրել այնպիսի մի ոլորտի վրա, ինչպիսին է հայ-մամլուքյան քաղաքական առնչությունների պատմությունը: Թեմայի արդիականության և հրատապության համար կռվան է այն գիտակցումը, որ հայոց թագավորության և Մամլուքյան սուլթանության քաղաքական հարաբերությունների բազմաթիվ մանրամասներ մինչ այժմ խորությամբ բացահայտված չեն: Դրա հիմնապատճառն այն անբավարար ուշադրությունն է, որ մինչ այժմ հայկական Կիլիկիայի պատմության մասնագետները ցուցաբերել են մամլուքյան և առհասարակ մուսուլմանական պատմագրական ժառանգության նկատմամբ: Մինչդեռ ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր (և պարսկագիր) հեղինակների երկերի ուսումնասիրությունը խիստ կարևոր է արևելամիջերկրածովյան և մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ուժերի թատերաբեմում Կիլիկյան Հայաստանի ունեցած դերն ու միջազգային կշիռը սահմանելու, հայ-մոնղոլական զինակցության և Մամլուքյան սուլթանության հետ նրա քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների ու հակամարտության սպառիչ պատկերը ստանալու տեսանկյունից: Այս նպատակը կյանքի կոչելու գործում մեզ օգնել է ԺԵ դարի մամլուքյան պատմիչ ալ-Մակրիզիի պատմագրական ժառանգությունը՝ ի մասնավորի նրա կարևորագույն երկերից մեկը՝ Kitāb al-sulūk li-ma'rifat al-duwal wa-l-mulūk-ը («Հարստությունների և արքաների հետ ծանոթացման ուղիների գիրք»): Ընդսմին, թեմայի գիտական նորույթը Կիլիկիո հայոց թագավորության պատմության համար կարևորություն ներկայացնող արաբական (և պարսկական) պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրության մեջ է, որոնց մի մասն առհասարակ ծանոթ չէ հայագիտությանը և առաջին անգամ է ներգրավվում որպես Կիլիկիայի պատմության սկզբնաղբյուր:

**Ատենախոսության ժամանակագրական ընդգրկումը:** 1250 թ. Եգիպտոսում տեղի ունեցած դինաստիական հեղաշրջումը և Մամլուքյան սուլթանության հիմնադրումը նոր փուլ բացեցին Մերձավոր Արևելքի պատմության մեջ: Մի քանի տարի անց (1256 թ.) տարածաշրջանի քաղաքական ասպարեզ էլավ ևս մի խոշոր ուժ՝ մոնղոլական Իլ-խանությունը: Արդեն ԺԳ դարի 50-ական թվականների վերջին և 60-ական թվականների սկզբին երկու պետությունների ռազմաքաղաքական բախումը դարձավ անխուսափելի: Մոնղոլների հետ դրացիություն հաստատած և նրանց գերակայությունն ընդունած հայոց թագավորությունը կամա-ակամա հայտնվեց երկու տերությունների աշխարհաքաղաքական ներհակ շահերի բախման առաջնագծում: Եգիպտոսի սուլթանության և Իլ-խանության

հարաբերությունները, ուղեկցվելով ռազմական առճակատման լայնածավալ գործողությունների և «սառը պատերազմի» հաջորդական փուլերով, տարածաշրջանի քաղաքական եղանակը պայմանավորող գերակա գործոն մնացին առնվազն 60 տարի: Սույն հետազոտության եզրափակիչ թվական է ընտրվել 1310-ը, որը Եգիպտոսի սուլթան ալ-Նասիր Մուհամմադ իբն Կալվալունի կառավարման երրորդ շրջանի (1310-1340 թթ.) առաջին տարին է: ԺԴ դարի առաջին տասնամյակում հայ-մոնղոլական դաշինքն արդեն սկսում է ճեղքեր տալ ու հետզհետե սպառել իր նշանակությունը: Կիլիկյան Հայաստանն այդուհետ ստիպված էր միայնակ դիմագրավել Մամլուքյան պետության ճնշմանը:

Աշխատանքը, իր բնույթով և ուղղվածությամբ աղբյուրագիտական լինելով, բնավ հայտ չի ներկայացրել տալ 1250-1310 թթ. հայ-մամլուքյան հարաբերությունների լիարժեք և բազմակողմանի պատկերը: Կիլիկյան Հայաստանի և Մամլուքյան սուլթանության առնչությունների համար կարևորություն ներկայացնող աղբյուրները այնքան շատ են և տարաբնույթ, որ դրանց հաղորդած տեղեկությունները գիտական հետազոտության այս ծավալում և ձևաչափում տեղավորել հնարավոր չէ: Հետևապես աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում ընտրված են Կիլիկիայի պատմության արաբական աղբյուրներում առավել լավ վկայագրված մի քանի շրջաններ (1250-1260 թթ., 1260-1270 թթ., 1304-1310 թթ.) և իրադարձություններ (1292 թ. Հռոմկլայի առում) արաբա-մուսուլմանական պատմագրության երկերի կարևորության ասպեկտները լուսաբանելու համար:

**Հետազոտության հիմնական նպատակները և խնդիրները:** Սույն աշխատանքի նպատակն է եղել պարզել ու գնահատել Կիլիկիո հայոց թագավորության և մասնավորապես 1250-1310 թթ. ընդգրկող ժամանակաշրջանում հայ-մամլուքյան հարաբերությունների պատմության համար ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկի ներկայացրած արժեքը, բացահայտել նրա փոխկապակցվածությունը ԺԳ-ԺԵ դարերի մամլուքյան պատմագրության մյուս սկզբնաղբյուրների հետ:

Հետևապես, ատենախոսության հեղինակը ոչ թե իր առջև խնդիր է դրել հայոց թագավորության հիշյալ ժամանակամիջոցի քաղաքական ամբողջական պատմությունը շարադրելը, այլ հայագիտությանը Կիլիկիայի պատմության ցայտմ անհրաժեշտ ուշադրության չարժանացած և նույնիսկ բազմաթիվ անձանոթ մամլուքյան սկզբնաղբյուրներին ծանոթացնելը, հայագետների և հայ արաբագետների հետաքրքրությունը դրանց նկատմամբ հարուցելը՝ ճանապարհ հարթելու ոլորտի զարգացման և նորանոր ուսումնասիրությունների համար:

Հատկանշական է, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հայոց պատմության համար կարևորություն ներկայացնող մամլուքյան սկզբնաղբյուրների հետազոտման ուղղությամբ արտերկրի ուսումնասիրողների կողմից գործադրված ջանքերն ավելին են եղել, քան հայրենական մասնագետներինը: Այնուամենայնիվ, օտարերկրյա և Հայաստանի հետազոտողների միջև գիտական համագործակցության

անբավարարության պատճառով չի ձևավորվել ոլորտի մշակման միասնական «ճակատ»: Ատենախոսությունը նպատակ է ունեցել հայագիտությանը ծանոթացնել այդ աշխատությունների հետ, հանգուցել Կիլիկյան Հայաստանի պատմության մամլուքյան սկզբնաղբյուրների հետազոտության ոլորտում հայ և օտար մասնագետների ունեցած ներդրումը:

**Աշխատանքի տեսական-մեթոդաբանական հիմքը:** Ատենախոսության մեթոդաբանության առանցքում աղբյուրագիտական քննության պատմա-համեմատական մեթոդն է: Հայ-մամլուքյան փոխհարաբերությունների հետազոտության համար ԺԳ-ԺԶ դարերի արաբալեզու սկզբնաղբյուրների ներկայացրած կարևորությունը լուսաբանելու համար աղբյուրագիտական ուսումնասիրության ուղեցույց է ընտրված ալ-Մակրիզի «Քիթաբ ալ-սուլուք» երկը, իսկ մյուս բոլոր երկերը քննված են վերջինիս վկայությունների հետ բաղդատությամբ:

**Թեմայի մշակվածությունը: Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:** Ճիշտ է, հայագիտական շրջանակներում մամլուքյան պատմագրության որոշ աղբյուրների օգտագործման փորձերը դեռ Ալիշանի, Լանգլուայի, Տուրնբեիզի, դը Մորգանի և վաղ շրջանի այլ ուսումնասիրողների աշխատություններում են ձեռնարկվել, բայց դրանք խիստ կցկտուր կամ դիպվածային բնույթ են կրել, խարսխվել են ոչ թե բուն արաբերեն բնագրերի, այլ եվրոպական լեզուներով կատարված վաղ թարգմանությունների վրա, ինչը շփոթմունքների և գիտական շրջանառություն սպրդած անճշտությունների պատճառ է դարձել: Թեմայի ուսումնասիրության գործում առաջին լուրջ քայլերը կատարվել են միայն նախորդ դարի վաթսուներկաններից սկսած: Մեկնարկն ազդարարել է 1965 թ. *Revue des Études Arméniennes* հայագիտական հանդեսի էջերում ֆրանսիացի արևելագետ Մարիուս Կանարի հրապարակած «Կիլիկիայի հայոց թագավորությունը և մամլուքները մինչև 1285 թ. պայմանագիրը» (*Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285*) հոդվածը:

Քաջ գիտակցելով Կիլիկյան Հայաստանի և ընդհանրապես հայոց պատմության համար միջնադարյան արաբական աղբյուրների կարևորությունը՝ Խորհրդային Հայաստանի արաբագիտական դպրոցի ներկայացուցիչներից Հակոբ Նալբանդյանը ձեռնարկել է Համայի Այյուբյան կառավարիչ Աբու ալ-Ֆիդայի երկի՝ հայերի և հարևան երկրների պատմության մասին տեղեկություններ պարունակող հատվածների թարգմանությունը, որը լույս է տեսել նույն 1965 թ.: Հաջորդ նշանակալի քայլը Ռիչարդ Սքոթի 1981 թ. գրած մագիստրոսական թեզն է՝ «Մամլուք-հայկական հարաբերությունները Բահրի շրջանում՝ մինչև Սսի անկումը (1250-1375 թթ.)» վերնագրով: Հայ-մամլուքյան փոխհարաբերությունների և հայկական Կիլիկիայի պատմության համար արաբական աղբյուրների գնահատման ուղղությամբ հաջորդ առաջընթաց քայլը կատարել է Անգուս Սոյուարտը 2001 թ. հրատարակած «Հայոց թագավորությունն ու մամլուքները: Պատերազմը և դիվանագիտությունը Հեթում Բ-ի թագավորության ընթացքում (1289-1307թթ.)» մենագրությամբ:

Կիլիկյան Հայաստանին նվիրված իր աշխատություններում արաբական աղբյուրներին մշտապես մեծ կարևորություն է տվել ֆրանսահայ պատմաբան և Կիլիկիայի պատմության ամենահմուտ մասնագետներից մեկը՝ Արմեն-Կլոդ Մուֆաֆյանը: 2012 թ. նա պատմաբանների դատին հանձնեց L'Arménie du Levant (XIe-XIVe siècle) երկհատոր աշխատությունը, որը վերջին տարիների խոշորագույն ներդրումներից մեկն է Կիլիկիայի պատմության հետազոտության ասպարեզում:

Հայ-մամլուքյան հարաբերությունների լուսաբանման ուղղությամբ որոշ աշխատանքներ են կատարել նաև արաբական աշխարհի հետազոտողները: Իրենց աշխատություններում Կիլիկիայի և մամլուքների փոխհարաբերություններին անդրադարձած արաբ ժամանակակից պատմաբաններից հիշատակության են արժանի հատկապես Ֆայիդ Համմադ Մուհամմադ Աշուրը և Սաիդ Աբդ ալ-Ֆաթթահ Աշուրը, Ջամալ ալ-Դին Սարուրը, Մուհամմադ Սուհայլ Տակկուշը, Ադիլ Աբդ ալ-Հաֆիզ Համզան, Աբդ Ալլահ Ջասիմ Ալի Ալ Սանին և Շաուքաթ Ռամադան Հուջան:

Ատենախոսության եզրաքարը ԺԳ-ԺԶ դարերի արաբալեզու՝ մասնավորապես մամլուքյան հարուստ պատմագրությունն է, որի կարևորագույն հուշարձանների հետ ծանոթությանն աշխատանքում մի ամբողջ գլուխ է նվիրված: Երկրորդ և երրորդ գլուխներում հայ-մամլուքյան քաղաքական հարաբերությունների պատմության խնդրո առարկա ընտրված դրվագների վերաբերյալ ալ-Մակրիզիի հայտնած տեղեկությունները համեմատված են Այյուբյան և Մամլուքյան հարստությունների իշխանության սահմանագծին ստեղծագործած վերջին Այյուբյան ժամանակագիրներ Աբու Շամայի, իբն ալ-Ամիրի, իբն Վասիլի երկերի հետ: Հետագա իրադարձությունների մասին ալ-Մակրիզիի վկայությունները զուգադրվում են մամլուքյան պատմագրական ավանդույթի ներկայացուցիչներ Իզզ ալ-Դին իբն Շադդադի, Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի, իբն Աբդ ալ-Ռահիմի, Բայբարս ալ-Մանսուրիի, ալ-Յունինիի, Շաֆի իբն Ալիի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Նուվայրիի, ալ-Ջազարիի, ԺԴ դարի մամլուք Անանուն հեղինակի, իբն ալ-Դավադարիի, ալ-Բիրզալիի, Կիրտայ ալ-Խազինդարիի, ալ-Ջահաբիի, ալ-Ումարիի, իբն ալ-Վարդիի, ալ-Քուլթուբիի, ղպտի Մուֆադդալ իբն Աբի ալ-Ֆադաիի, իբն Քասիրի, իբն ալ-Ֆուրաթի, իբն Խալոունի, իբն Դուկմակի, ալ-Կալկաշանդիի, ալ-Այնիի, իբն Թադրի Բիրդիի և այլոց երկերի հետ: Մամլուքյան պատմագրական ավանդույթից դուրս են, բայց չափազանց օգտակար քրիստոնյա իբն ալ-Ֆուվատիին վերագրվող արաբերեն երկը և Բար Հեբրեոսի ժամանակագրության արաբերեն խմբագրությունը:

Թեմայի ուսումնասիրության համակողմանիությունն ապահովելու և հատկապես հայ-մոնղոլական դաշնակցության և հայ-սելջուկյան հարաբերությունների որոշ դրվագների լուսաբանման համար օգտակար են եղել նաև Իկոնիայի սուլթանության և Իլ-խանության պատմության պարսկալեզու աղբյուրները՝ իբն Բիբիի, Ջուվայնիի, Ռաշիդ ալ-Դինի, Համդալլահ Կազվինիի, Քաշանիի, Վասսաֆի և այլոց երկերը:

Կիլիկիո հայոց թագավորության համար կարևորություն ներկայացնող գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը թերի ու անտրամաբանական կլիներ, եթե դրանք չքննվեին ժամանակի հայ և օտար այլ մատենագիրների ավանդած պատմական նյութի լույսի ներքո: Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել են Սամվել Անեցու շարունակողների, Վարդան Արևելցու, Սմբատ Սպարապետի և նրա շարահարողների, Գրիգոր Ականցի կամ Ակներցու, Կիրակոս Գանձակեցու, Վահրամ Բաբունու, Ստեփանոս Օրբելյանի, մի շարք այլ մանր տարեգիրների երկեր, բազմաթիվ հայ հիշատակագիրների հաղորդումներ: Կարևոր են եղել նաև «Գործք կիարացվոց», Հեթում Կոռիկոսցու (Հայթոն), Ժան դը ժուանվիլի, Սիմոն դը Սենտ Բվենտինի, Հովհաննես Դարդեղի լատիներեն և հին ֆրանսերեն աշխատությունները:

**Ատենախոսության կիրառական նշանակությունը:** Աշխատանքը, Կիլիկիո հայոց թագավորության պատմության առանձնապես մամլուքյան սկզբնաղբյուրների համապարփակ լուսաբանման և հետազոտության անդրանիկ փորձը լինելով, հավակնություն ունի ուղեցույց դառնալ ոլորտի հետագա մշակումների ու նորանոր ուսումնասիրությունների համար: Այն կարող է նաև հիմք ծառայել մամլուքյան պատմագրության զուտ արաբագիտական ուսումնասիրությունների, միջնադարյան մուսուլմանական մատենագրությանը վերաբերող բուռական դասընթացների, դասախոսությունների և ձեռնարկների համար:

**Աշխատանքի փորձաքննությունը:** Ատենախոսության հիմնական դրույթներն ու մշակումները ներկայացվել են հեղինակի հրապարակած հոդվածներում: Դրանցից մեկի նախնական տարբերակը քննարկվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի նիստերից մեկում, մյուսը որպես զեկուցում ընթերցվել է անվանի արևելագետ Ա. Տեր-Ղևոնդյանի 85-ամյակին նվիրված միջազգային երիտասարդական գիտաժողովում (2013 թ. նոյեմբերի 1-3): Թեմայի ուսումնասիրության՝ մասնավորապես արաբալեզու գրականության բացը լրացնելու գործում անգնահատելի նշանակություն է ունեցել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորած «Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (ԺԲ-ԺԳ դդ.)» ծրագիրը (13-6A388) և նրա շրջանակներում Լիբանան (Բեյրութ) կատարված ակադեմիական գործուղումը:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ ԱԻ «Քրիստոնյա Արևելք» և «Արաբական երկրներ» բաժինների համատեղ նիստում:

**Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:** Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երեք գլխից (բաղկացած համապատասխանաբար 4, 2 և 3 ենթագլուխներից), Եզրակացությունից, Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

**Ներածության** մեջ ընդգծվում է միջնադարյան օտարալեզու և հատկապես մուսուլմանական սկզբնաղբյուրների (մասնավորապես ԺԳ-ԺԶ

դարերի մամլոքյան պատմագրության) հետազոտության կարևորությունը Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Սահմանված է հետազոտության առարկան, հիմնավորված է թեմայի արդիականությունը, պարզաբանված են աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, ներկայացված են թեմայի մշակման ուղղությամբ Հայաստանի և օտարերկրյա պատմաբանների կատարած աշխատանքները:

**Գլուխ Ա. «Ալ-Մակրիզիի տեղը մամլոքյան պատմագրական ավանդույթում»:** Գլխի առաջին ենթագլուխը՝ «Արաբա-մուսուլմանական պատմագրության մամլոքյան շրջանը: Սկզբնաղբյուրների տեսություն», նվիրված է միջնադարյան արաբական պատմագրության ԺԳ-ԺԶ դդ. «մամլոքյան ավանդույթի» կարևորագույն ներկայացուցիչների մատենագրական ժառանգության հետ ծանոթությանը:

Որոշ աղբյուրներ են տարվում Այյուբյան և Մամլոքյան շրջանների պատմագրական ավանդույթների միջև: Խոսվում է մամլոքյան պատմագրության մեջ «ասորիքյան» և «եգիպտական» դպրոցների տարանջատման հարցի շուրջ՝ մատնանշելով ավանդույթի երկու ճյուղերի ձևաբովանդակային հիմնական տարբերությունները:

Անցում կատարելով ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր հեղինակների երկերի նկարագրությանը՝ նախ անդրադարձ է կատարված վերոհիշյալ երկու դինաստիաների իշխանության սահմանագծին ապրած և ստեղծագործած Այյուբյան վերջին մատենագիրների երկերին, ովքեր շարունակեցին գրի առնել Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները՝ երբեմն չթաքցնելով իրենց անհանդուրժողական դիրքը մամլոքների կառավարող վերնախավի նկատմամբ:

Մամլոքները, սակայն, շուտով «գտան» իրենց պատմիչներին, ովքեր լոյալ դիրքորոշում որդեգրելով իրենց հանդեպ, բարենպաստ գույներով և լեզվատիրության դիրքերից ներկայացրեցին Սուլթանության պատմությունը: Խոսքը հատկապես այսպես կոչված պալատական կենսագիրների մասին է (օրինակ՝ իբն Աբդ ալ-Ջահիրի), ովքեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում արքունիքում: Մամլոքյան ռազմավարական համակարգի օղակներում ավելի բարձր պաշտոններ զբաղեցնող պատմագիրներ էլ կային (օրինակ՝ Բայբարս ալ-Մանսուրին և Աբու ալ-Ֆիդան): Մամլոքյան դարաշրջանի բոլոր կարևորագույն մատենագիրները (ժամանակագիրներ, հանրագիտարանագիրներ, կենսագրական բառարանների, գրագրության և քարտուղարության ձեռնարկների հեղինակներ) առանձին անդրադարձի են արժանացել: Լուսաբանված են Կիլիկյան Հայաստանի պատմության համար այս կամ այն երկի ներկայացրած հետաքրքրության տեսանկյունները՝ մատնանշելով դրանց ուսումնասիրության որոշ ուղենիշեր:

Գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Ալ-Մակրիզին և նրա ժամանակը. կենսագրական ակնարկ», պարփակում է ալ-Մակրիզիի կյանքի ու գործունեության համառոտ շարադրանք: Ուշադրություն է հրավիրված հեղինակի կենսագրության առանձնապես այն մանրամասների վրա, որ



ազդեցություն են ունեցել ալ-Մակրիզի պատմիչի ձևավորման վրա, բացատրում են քաղաքական գործունեությունից հրաժարվելու և պատմագրությանը նվիրվելու նրա որոշման դրդապատճառները:

Գլխի երրորդ ենթագլուխը կոչվում է «**Ալ-Մակրիզի մատենագրական ժառանգությունը**»: Փորձ է արվել սահմանել ալ-Մակրիզի հեղինակած պատմագրական հուշարձանների տեղը մամլուքյան պատմագրական ավանդույթում: Նա հեղինակ է բազմաթիվ և տարբեր ժանրերի երկերի՝ ինչպես կարճառոտ մենագրությունների, այնպես էլ ստվարահատոր ժամանանակագրությունների և կենսագրական բառարանների, թեև նրա թողած հարուստ մատենագրական ժառանգությունից ամեն ինչ էլ, որ պահպանվել է: Օրինակ, կորած է 'Idq ġawāhir al-asfat fi mulūk Miṣr wa-l-Fuṣṭāṭ («Ջարդատուփի մանյակ Եգիպտոսի և Ֆուստատի արքաների մասին») երկը, որ Եգիպտոսի պատմությունն է՝ իսլամական նվաճումից մինչև Ֆաթիմյան հարստության հիմնադրումը: Մինչդեռ պահպանված է նրա հեղինակած «Ֆաթիմյան պատմությունը» Itti' āz al-hunafa' bi-aḥbār al-'imma al-Fātimīyyīn al-ḫalafa' («Հորդորներ հավատացյալներին ֆաթիմյան իմամ-խալիֆաների հաղորդումների վերաբերյալ»):

Ալ-Մակրիզի պատմագրական ժառանգության թագը նրա՝ Այուբյանների և Մամլուքների պատմությանը նվիրված երկն է՝ Kitāb al-sulūk li-ma' rifat al-duwal wa-l-mulūk-ը: Այն մեծ վարկ է ունեցել անգամ հեղինակի կենդանության օրոք՝ նույնիսկ Եգիպտոսի սահմաններից անդին: Վերջին ժամանակներում, սակայն, մամլուքների պատմության նորանոր աղբյուրների հրատարակությունը երևան է հանել ալ-Մակրիզի պատմագրական «մեթոդի» կարևորագույն թերությունը՝ իր օգտագործած աղբյուրները չիժատակելու նրա սովորությունը, որը երբեմն անճշտությունների և հաղորդումների իրական բովանդակության աղավաղման պատճառ է դարձել:

Հեղինակի մյուս գլուխգործոցը al-Mawā'iz wa-l-'itibār bi-dīkr al-ḥiṭaṭ wa-l-aṭār («Հորդորներ և խրատներ թաղամասերի և հուշարձանների նկարագրության համար») աշխատությունն է: Այն նվիրված է ընդհանրապես Եգիպտոսի և մասնավորապես Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը: Kitāb al-sulūk-ի պես al-Ḥiṭaṭ-ը բուռն քննարկումների առարկա է արդի հետազոտողների շրջանում: Բայց եթե առաջինի դեպքում քննադատների տված գնահատականները չեն անցնում հեղինակի «մասնագիտական անազնվության կամ անբարեխղճության» սահմանը, ապա այս երկրորդի դեպքում ալ-Մակրիզիին հասցեագրված մեղադրանքները շատ ավելի լուրջ են, քանի որ խոսքն այստեղ գրագողության մասին է:

Ալ-Մակրիզին հեղինակ է նաև երկու կենսագրական բառարանների (al-Tārīḫ al-muqaffā al-kabir, Durar al-'uqūd al-farīda fi tarāğim al-a'yān al-mufīda): Ալ-Մակրիզի մեզ հասած երկերից քիչ հայտնի է, բայց խիստ կարևոր al-Ḥabar 'an al-bašar («Մարդկության պատմություն») վերնագրով համընդհանուր պատմությունը:

Բացի այս հիմնարար աշխատություններից՝ ալ-Մակրիզին հեղինակ է բազմաթիվ կարճառոտ ակնարկների, որոնց մի մասն առհասարակ կապ

չունի պատմագրության հետ, բայց ուրվագծում է մատենագրի գիտական հետաքրքրությունների և հանրագիտարանային գիտելիքների շրջանակը:

Գլխի չորրորդ և վերջին՝ **«Ալ-Մակրիզիի «Քիթաբ ալ-սուլուք»-ը Կիլիկյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուր: Մեթոդաբանական դիտարկումներ»** ենթագլխում բացատրված է, թե ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր պատմիչների մեծաթիվ «փաղանգից» ինչու են հենց ալ-Մակրիզին և նրա Kitāb al-sulūk-ն ընտրվել Կիլիկյան Հայաստանի պատմության աղբյուրագիտական քննություն կատարելու համար:

**Գլուխ Բ. «Կիլիկյան Հայաստանը մերձավորարևելյան քաղաքական միավորների խճանկարում ԺԳ դարի կեսերին»:** Գլխի առաջին ենթագլուխը կրում է **«Մամլուքյան սուլթանության հիմնադրումն ու հայ-մամլուքյան հակամարտության ակունքները»** վերնագիրը: Այստեղ նախ համառոտ անդրադարձ է կատարված 1250 թ. Այյուբյան դինաստիայի տապալման և Մամլուքյան սուլթանության կազմավորման պատմական հանգամանքներին:

ԺԳ դարի կեսը բախտորոշ ժամանակաշրջան էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորության համար: Սա կապված էր հիմնականում դեպի Առաջավոր Ասիա և Մերձավոր Արևելք մոնղոլների հաղթական երթի և ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրադրության հետ: Հեթոմ արքայի (1229-1269 թթ.) դիվանագիտական հեռատեսությունը թույլ տվեց խուսափել նոր նվաճողների հետ բախումից: Հատկանշական է, որ մինչև մոնղոլների հայտնվելը Հայոց թագավորությունը գտնվում էր Իկոնիայի Սելջուկյան սուլթանության ենթակայության ներքո: Սակայն, երբ 1243 թ. Քյոսեդաղի (Չմանկատուկի) ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռումի սելջուկները, վտանգը շատ մոտ և հետևաբար միջազգային դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումը օրապահանջ դարձավ նաև Կիլիկյան Հայաստանի համար: Մոնղոլ զորավար Բաչու-նոյինի հետ սկսած բանակցություններն արգասաբեր եղան: 1247-1248 թթ. Սմբատ Սպարապետի և 1254 թ. Հեթոմ արքայի՝ համապատասխանաբար Գույուկ (1246-1248 թթ.) և Մանգու (1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած դեսպանագնացություններով Կիլիկիո Հայոց թագավորությունը ստորակա դարձավ մոնղոլներին: Մանգուի օրոք նրա եղբայր Հուլաղուն ավարտեց Իրանի նվաճումն ու հիմնադրեց մոնղոլական Իլ-խանությունը (1256-1335թթ.):

1259 թ. Հուլաղուն գրավեց Բաղդադը և կործանեց Աբբասյան խալիֆայությունը: Հաջորդ տարում նա ձեռնարկեց մոնղոլների առաջին «ասորիքյան արշավանքը»: Ասորիքյան քաղաքների գրավմանն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև հայոց արքա Հեթոմը: Ճիշտ է՝ ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ը գրեթե ոչինչ չի հաղորդում Ասորիքի գրավմանը Հեթոմի բերած մասնակցության վերաբերյալ, բայց մյուս արաբագիր պատմիչների երկերը հնարավորություն են տալիս լրացնել այդ բացը:

Այն Զալուտի ճակատամարտում (1260 թ.) Եգիպտոսի սուլթան Կուտուբից կրած ծանր պարտությունից հետո մոնղոլները ստիպված եղան նահանջել Իրան: Եթե հաշվի առնենք Սմբատ Սպարապետի վկայությունը ճակատամարտին Հեթոմի ուղարկած 500 ռազմիկների մասնակցության

մասին, ապա կարող ենք ընդունել, որ այն նաև հայ-մամլության առաջին անմիջական բախումն էր:

1260 թ. Կահիրեում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման արդյունքում Սուլթանության գահին նստեց Բահրի մամլության խմբավորման ներկայացուցիչ Բայբարս ալ-Բունդուկտարին (1260-1277 թթ.): Բայբարսի գահակալման սկզբից մուսուլմանական այս պետության հետ հարաբերությունների հարցը մեկընդմիջտ ամրագրեց իր տեղը Կիլիկիայի արտաքին քաղաքականության օրակարգում:

Գլխի երկրորդ՝ **«Մոնղոլները, իլ-խանները և Կիլիկյան Հայաստանը»** ենթագլխում արդեն ուշադրության կենտրոնում են հայ-մոնղոլական հարաբերությունները և դրանց մասին տեղեկություններ հաղորդող արաբալեզու և պարսկալեզու երկերը: Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ը ոչինչ չի բովանդակում այս իրադարձությունների մասին: Այստեղ համառոտ անդրադարձ է կատարված Չինգիս խանի գլխավորությամբ Մոնղոլական Մեծ տերության (Yeke Monggol Ulus) կազմավորման պատմական հանգամանքներին: Աշխարհակալի մահից հետո նրա որդիներն ու թոռները, թեև շարունակեցին մոնղոլահպատակ հողերի ընդարձակումը, բայց ԺԳ դարի կեսերից սկսած կայսրությունը տրոհեցին չորս ինքնավար պետությունների (ուլուսների)՝ Ջոչիի ուլուսի (հետագայում՝ Ոսկե Հորդա), Չաղաթայի ուլուսի կամ խանության, Մեծ խան Դուբիլայի և նրա հաջորդների ստեղծած Յուան հարստության և վերջապես Իլ-խանության:

1243 թ. Ռումի սելջուկների կրած ծանր պարտությունն ազդարարեց Փոքր Ասիայում նրանց գերիշխանության ավարտը: Այս պարագայում Հեթում արքան շտապեց իր հնազանդությունը հայտնել մոնղոլներին: Հայ-սելջուկյան հարաբերությունների խզման և հայ-մոնղոլական հարաբերությունների ձևավորման մասին հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում Իկոնիայի պաշտոնական պատմիչ իբն Բիբին և մամլության պատմիչ Իզզ ալ-Դին իբն Շադադը:

Սմբատ Սպարապետի Կարակորում կատարած դեսպանագնացության (1247/1248 թ.) մասին ակնարկ կա պարսիկ պատմագիր Ջուվայնիի Tārīḫ-e Ġahān-Guṣā («Աշխարհակալի պատմությունը») երկում: Վերջինս Կարակորում՝ Գույուկի թագադրությանը մասնակցելու գնացած հյուրերի շարքում նշում է ոմն «Թաքավորի սուլթան»-ի (sulṭān-e Tākavor): Ջուվայնիի այս արտահայտությունը արդի որոշ ուսումնասիրողների շրջանում ներհակ մեկնաբանությունների և «Թաքավորի սուլթան»-ին նույնականացնելու մի քանի վրիպական վարկածների պատճառ է դարձել: Այնուամենայնիվ, Բար Հեբրեոսի ժամանակագրության արաբերեն խմբագրությունը հնարավորություն է տալիս շտկել պարսիկ մատենագրի սխալը:

Որքան էլ որ 1254 թ. Մոնղկե խանի արքունիք Հեթում Ա-ի կատարած դեսպանագնացության ամենամանրամասն նկարագրությունը միջնադարյան հեղինակներից տալիս է Կիրակոս Գանձակեցին, այնուհանդերձ արքայի դիվանագիտական առաքելության մասին արժեքավոր վկայություններ են տալիս նաև Բար Հեբրեոսի ասորերեն և արաբերեն

ժամանակագրությունները, ինչպես նաև Իզդ ալ-Դին իբն Շադդադի al-A'laq al-haṭīra երկը:

**Գլուխ Գ. «Ալ-Մակրիզին Կիլիկյան Հայաստանի 1260-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր»:** Գլխի առաջին ենթագլուխը կոչվում է «Հայմամլուքյան հարաբերությունները 1260-1270 թթ.» ըստ ալ-Մակրիզիի և մյուս մամլուքյան պատմիչների»: Այն Զալուտի և հետո նաև Հոմսի (1261 թ.) ճակատամարտերում կրած պարտություններից հետո Հուլադուն, բնավ, չիրաժարվեց Ասորիքը գրավելու իր մտքից: Այնուամենայնիվ, Բերքե խանի դեմ պատերազմի բռնում գտնվելով՝ զրկված էր անձամբ այդ ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելու հնարավորությունից: Նա, սակայն, կարող էր այդ նպատակով օգտագործել իր քրիստոնյա ստորակային՝ Հայոց թագավորությանը: Այսպես, հավանաբար հենց իլ-խանի հորդորներով Հեթումը 1262-1264 թթ. ընթացքում մի քանի ռազմարշավ կազմակերպեց Հյուսիսային Ասորիքի բնակավայրերի դեմ, որոնք բոլորն էլ անհաջող վերջաբան ունեցան: Դրանք միայն հարուցեցին մամլուքյան իշխանությունների գայրոյթը Կիլիկյան Հայաստանի որդեգրած քաղաքական կուրսի և հայ-մոնղոլական զինական գործակցության նկատմամբ: Անդրադարձ է կատարված միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ Կիլիկիո հայոց արքաներին տրված տիտղոսներին՝ մասնավորապես takfūr-ին, որ ծագում է հայերեն «թագավոր» բառից:

1265 թ. Հուլադուի մահից հետո Իլ-խանության գահին նստեց նրա որդին՝ Աբադան, ով Ոսկե Հորդայի հետ շարունակվող պատերազմով զբաղված լինելով՝ հարկադրված եղավ առժամանակ սատեցնել մամլուքների հետ հակամարտությունը: Բայբարսը սա պատեի միջոց համարեց Հայոց թագավորության հետ հարաբերությունները պարզելու համար: Բայբարսի 1266 թ. արշավանքը պատճառ դարձավ Կիլիկիայի համատարած ավերածությանն ու ավարառությանը, բնակչության կոտորածին, Լևոն արքայազնի գերեվարությանը և այլ հետևանքների: Այս և հաջորդած իրադարձությունների մասին տեղեկություններ հաղորդող արաբագիր հեղինակների երկերի նյութի քննությունից պարզվում է, որ ալ-Մակրիզին գրեթե միշտ տալիս է իրադարձությունների խիստ համառոտված և ամփոփ նկարագիրը: Հիշյալ ժամանակաշրջանի իրադարձություններին ալ-Մակրիզիի տված շարադրանքը ամենաշատը աղերսվում է Բայբարսի կենսագիր, արքունական դիվանատան գլխավոր քարտուղար իբն Աբդ ալ-Չահիրի al-Rawḍ al-zāhir երկի շարադրանքին: Սույն ենթագլխում քննարկված է նաև Հեթում արքային արաբագիր մատենագիրների վերագրած al-Malik al-muṣṣir («հովանավոր արքա») մականունը:

Տևական դիվանագիտական խուսանավումներից հետո 1268 թ. Անտիոքում կնքվեց հայ-մամլուքյան հաշտության պայմանագիրը: Լևոնի ազատության դիմաց Սունկուր ալ-Աշկարին հանձնելուց բացի՝ հայոց արքան պարտավորվեց նաև մամլուքներին վերադարձնել Հուլադուի 1260 թ. արշավանքի ժամանակ խլած բերդերը: Որդու վերադարձից հետո Հեթումը նրան զիջեց երկրի կառավարման ղեկն ու վանք քաշվեց: Ալ-Մակրիզիի և մի

շարք այլ մամուլային պատմիչների վկայությունը Հեթումի մահվան ամսաթվի (1270 թ. նոյեմբերի 7) վերաբերյալ չի համընկնում հայկական աղբյուրների հայտնած տեղեկության (1270թ. հոկտեմբերի 28) հետ:

Կիլիկիո հայոց թագավորության համար մամուլային մատենագրության կարևորությունը լուսաբանելու համար գլխի երկրորդ ենթաաղբյուրում՝ **«Հռոմկլայի 1292 թ. գրավումը՝ ըստ ալ-Մակրիզիի և մյուս մամուլային պատմիչների»**, աղբյուրագիտական քննության թեմա են ընտրված մամուլք սուլթան ալ-Աշրաֆ Խալիլի (1290-1293 թթ.) կողմից կաթողիկոսանիստի առման հանգամանքները:

1280-ական թվականների վերջերին, երբ մոնղոլ իլ-խան Արղունն (1284-1291 թթ.) անպտուղ դեսպանագնացություններ էր հղում եվրոպական երկրներ հակամամուլքային դաշինք կազմելու համար, մամուլքները զբաղված էին Ասորիքի և Պաղեստինի վերջնական հպատակեցմամբ: Արղեն 1289 թ. նրանց հարվածների տակ ընկավ Տրիպոլին, թեև սուլթան ալ-Մանսուր Կալվալունի մահը դուրս-ինչ ընդմիջեց խաչակրաց մյուս տիրույթների գրավման գործը: Նրա ձեռնարկումը, չնայած իր կարճատև գահակալությանը, հաղթական ավարտի հասցրեց որդին՝ ալ-Աշրաֆ Խալիլը: 1291 թ. նա գրավեց Աքրան: Աքրայի առումից հետո սուլթանը նամակ հղեց հայոց արքա Հեթում Բ-ին՝ ահաբեկելով հայոց թագավորությունը Աքրայի բախտին արժանացնել: Նամակի տեքստը մամուլքային պատմիչներից պահպանել են ԺԴ դարի մամուլք Անանուն ժամանակագիրը և իբն ալ-Դավադարին:

1292 թ., երբ Կիլիկիայում սպասում էին սուլթանի մոտալուտ հարձակմանը, ալ-Աշրաֆը վճռեց անակնկալ թիրախել Հռոմկլան և մեկընդմիջտ լուծել սուլթանության սահմանազրկին ընկած հայկական տիրույթի նվաճման օրահարցը: Հայոց հայրապետի նստոցի գրավմանը ալ-Մակրիզիի տված ամփոփ նկարագրությունը կարծես թե իբն ալ-Ֆուրաթի *Tārīḫ al-duwal wa-l-mulūk* երկի համապատասխան հատվածի համառոտ վերաշարադրանքն է: *Kitāb al-sulūk*-ի և մյուս մամուլքային աղբյուրների համեմատությունը երևան է հանում կաթողիկոսանիստ դրյակի առման բազմաթիվ հետաքրքրական մանրամասներ: Օրինակ, արաբագիր պատմիչները բավական հանգամանալից են խոսում բերդի պաշարման ժամանակ մամուլքների գործի դրած քարանետ մեքենաների և պաշարողական այլ տեխնիկայի վերաբերյալ:

Մամուլքային զորքը 33 օր շարունակ քարկոծել է բերդաքաղաքը: Մամուլք պատմիչների վկայություններից պարզ է դառնում, որ այդ ընթացքում բերդի բնակիչներին պաշարման մահաբեր օղակից փրկելու համար հայերի կամ մոնղոլների կողմից որոշ հուսահատ քայլեր են ձեռնարկվել: Ըստ ալ-Այնի պատմիչի՝ Հեթում Ա-ը փորձել է հնարամտությամբ՝ մոնղոլական հագուստներով ծափված հայկական զորախմբի միջոցով Հռոմկլայի մատույցներից վանել մամուլքներին: Նրա պատմությունը գուցե և արձագանքն է Հռոմկլան սուլթանի պաշարումից ազատելու մոնղոլների մի չհաջողված փորձի, որի մասին զրույցի նախնական տարբերակը գտնում ենք *Բայբարս ալ-Մանսուրիի Zubda* և *al-Tuhfa* երկերում: Վերջինս, բերդի

պաշարմանը անձամբ մասնակցած լինելով, սեփական հիշողություններն է ներկայացնում: Բայքարս ալ-Մանսուրիի վկայությունը հաստատվում է իլ-խանների պատմիչ Ռաշիդ ալ-Դինի հաղորդմամբ: Նրա վկայությունից եզրակացրել ենք, որ մոնղոլները երկու անգամ են ուղղություն վերցրել դեպի պաշարված Հոռմկլա:

Նույնիսկ առանց դրսից օգնություն ստանալու՝ հոռմկլայեցիները հերոսական դիմադրություն են կազմակերպել՝ մինչև վերջին ճիգը դիմադրելով թշնամուն: Այնուամենայնիվ, նրանք ի գորու չեն եղել կոտորելու ալ-Մալիք ալ-Աշրաֆի վճռականությունը: Հոռմկլան գրավվեց 1292 թ. հունիսի 28-ին: Արաբագիր պատմիչները բերդի գրավման գործում առանձնացնում են Դամասկոսի փոխարքա (nā'ib al-saltana) Սանջար ալ-Շուջջախի ունեցած ներդրումը:

Բերդի գրավումից անմիջապես հետո նամակներ են ուղարկվում Դամասկոս, Կահիրե և Սուլթանության մյուս քաղաքներ՝ ավետելու առան լուրը: Մամլուքյան որոշ պատմիչներ (ալ-Ջազարի, ալ-Նուվայրի, իբն ալ-Դավադարի, Անանուն մամլուք տարեգիր, իբն ալ-Ֆուրայթ) պահպանել են այդ նամակներից երկուսի ամբողջական բնագիրը: Ուշագրավ է, որ սուլթանի ուղարկած նամակներից մեկի արաբերեն ընդօրինակությունն էլ պահպանել է պարսիկ մատենագիր Վասսաֆը:

Ինչպես երևում է, Հոռմկլայի պաշարմանը մասնակցած Համայի տեր ալ-Մալիք ալ-Մուզաֆֆարը չի սպասել բերդի վերջնական գրավմանը և վերադարձել է Համա: Այդ եզրակացությանն ենք հանգել այն պատճառով, որ սուլթանի հղած նամակներից մեկն էլ ուղղված է եղել հենց նրան: Այս մասին բացատրիկ տեղեկությունը գտել ենք իբն Վասիլի շարահարող իբն Աբդ ալ-Ռահիմի մոտ, ով այդ ժամանակ զբաղեցնում էր ալ-Մալիք ալ-Մուզաֆֆարի արքունի դիվանապետի պաշտոնը:

Գլխի երրորդ և վերջին ենթագլուխը վերնագրված է **«Հայ-մամլուքյան հարաբերությունները 1304-1310 թթ.՝ ըստ ալ-Մակրիզիի և մյուս մամլուքյան պատմիչների»**: Մամլուքյան պատմագրության հուշարձանների կարևորությունը հայկական Կիլիկիայի պատմության ուսումնասիրությունների համար առավել քան ակնհայտ է հիշյալ շրջանի համար, որովհետև արդեն խիստ սահմանափակ են ժամանակի հայկական աղբյուրները: Կիլիկիայի հետ առնչվող բազմաթիվ անցքերի եզակի հաղորդողները մնում են ԺԴ-ԺԵ դդ. արաբագիր հեղինակները:

Հեթում Բ-ի գահակալության տարիները ներքաղաքական վայրիվերումներով և արտաքին քաղաքական սպառնալիքներով լի շրջան էին Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ: Մի կողմից ինքն իրեն ավելի շատ ֆրանցիսկյան միաբանության վանական, քան թե արքա համարող Հեթումի անվճռականությունը, մյուս կողմից նրա եղբայրների (Թորոս, Սմբատ, Կոստանդին) միջև գահի նկատմամբ ունեցած անզիջում հավակնությունները, հայոց արքունիքում սովորական երևույթ դարձած խարդավանքները երկիրը կանգնեցրին ներքաղաքական ճգնաժամի առջև:

Գիտակցելով Մամլուքյան սուլթանությունից եկող վտանգի լրջությունը՝ Հեթումը Բ-ը, այնուամենայնիվ, փորձ կատարեց Բյուզանդական կայսրության և Կիպրոսի թագավորության հետ խնամիական կապերով և մոնղոլների հետ շարունակվող դաշնակցությամբ վերականգնել երկրի քաղաքական կշիռը ժամանակի միջազգային հարաբերություններում: Չուր չէ, որ Հեթումը մասնակցություն ունեցավ Ղազան խանի 1299, 1300 և 1303 թվականների ասորիքյան արշավանքներին, որոնք բոլորն էլ, չնայած մասնավոր հաջողություններին, վերջին հաշվով անհաջող ելք ունեցան: Մամլուքյան աղբյուրները սարսափով են գրում 1300 թ. Դամասկոսի գրավման ժամանակ Հեթում Բ-ի կողմից ալ-Սալահիյյա (al-ṣalāḥiyya) արվարձանի ավարառության մասին: Հատկանշական է, որ մոնղոլների վերոհիշյալ արշավանքների ընդմիջումներում մամլուքները նույնպես արշավներ էին կազմակերպում Կիլիկյան Հայաստան՝ պատժելու հայերին Իլ-խանության ռազմական ձեռնարկումներում նրանց բերած մասնակցության համար: Նման մի արշավանք տեղի ունեցավ 1302 թ., որը գերազանցապես կողոպտչական նպատակներ էր հետապնդում: Իրադրությունն այլ էր 1304 թ., երբ Ղազան խանի վերահաս մահն ի դերև էր հանել կարճ ժամկետներում դեպի Ասորիք մի նոր արշավանք կազմակերպելու մոնղոլների հույսերը: Հետևապես աշխատանքի այս հատվածում անդրադարձ է կատարված մամլուքների 1304-1305 թթ. երկու արշավանքներին, որոնք համեմատաբար քիչ ուսումնասիրված են հայագիտության մեջ: Հայկական աղբյուրներն այս արշավանքների առնչությամբ շատ քիչ վկայություններ ունեն, ընդ որում 1304 թ. տեղի ունեցածի մասին՝ գրեթե ոչինչ: Ալ-Մակրիզի և մյուս մամլուքյան աղբյուրներն ուշագրավ տեղեկություններ են հաղորդում, օրինակ, Թել Համդուն բերդի գրավման և մի խումբ հայ իշխանների գերեվարության ու սպանության մասին՝ բացառությամբ ալ-Նուջայմա կոչված բերդի տիրոջ, ով իր կյանքը խնայելու դիմաց իբր իսլամ է ընդունել և խոստացել օգնել՝ գրավելու Սիսը:

Արժեքավոր են ԺԴ-ԺԵ դարերի արաբալեզու պատմագրական երկերի հայտնած տեղեկությունները 1305 թ. տեղի ունեցած մեկ այլ արշավանքի մասին, որն ավարտվել է մամլուքյան զորքի պարտությամբ: Այս արշավանքի մասին իր «Արևելքի պատմության ծաղկաբաղ» գրքում համառոտ կերպով գրում է նաև Հեթում Կոռիկոսցին, բայց իրադարձությունների նրա շարադրանքը միայն մասամբ է աղերսվում արաբագիր պատմիչների հայտնած տեղեկությունների հետ: Մամլուքների պարտությունից հետո սուլթան ալ-Նասիր Մուհամմադը հրամայել է ևս մեկ արշավանք ձեռնարկել Կիլիկյան Հայաստանի դեմ: Արշավանքի անմիջական մասնակիցն ու ղեկավարներից է եղել Բայբարս ալ-Մանսուրի պատմիչը, ով ականատեսի իր հիշողություններն է ներկայացնում իրադարձությունների մասին:

Ենթազվառում խոսվում է նաև ԺԴ դարի առաջին տասնամյակում հոգևարք ապրող հայ-մոնղոլական դաշնակցային հարաբերությունների, դրանում մոնղոլների դավանափոխության գործոնի ունեցած դերի մասին: 1306 թ. հետո մամլուքների հետ հարաբերություններում հաստատված հարաբերական

դադարը Կիլիկյան Հայաստանի համար հնարավորություն էր՝ վերականգնելու տարիներ շարունակ մոնղոլների վարած պատերազմների և մամլուքների պատասխան արշավանքներից մեծապես բզկտված տնտեսությունը, չնայած երկրի ներքաղաքական կացությունն այդ հնարավորությունը լիարժեքորեն իրացնելու միայն նվազ հույսեր էր տալիս:

**Եզրակացության** մեջ ամփոփված ու ընդհանրացված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները:

**Ա.** Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար միջնադարյան հայկական մատենագրությունից բացի անգնահատելի կարևորություն ունեն նաև ժամանակի օտար սկզբնաղբյուրները: Սա ցայտուն է հատկապես 1250-1310 թթ. ընդգրկող ժամանակաշրջանի համար, որը, թերևս, Կիլիկյան Հայաստանի պատմության առավել լավ վկայագրված շրջանն է մուսուլմանական մատենագրության մեջ՝ պայմանավորված տարածաշրջանի քաղաքական գործընթացներին հայկական պետության ներգրավվածության աստիճանով և առավել քան երբևէ ակտիվ դերով:

ԺԳ դարի 40-50-ական թվականներին մոնղոլների կողմից այսրկովկասյան և փոքրասիական տարածքների հպատակեցումից հետո նոր նվաճողների ներխուժման վտանգը վերահաս սպառնալիք դարձավ նաև Հայոց թագավորության համար: Ստեղծված իրավիճակում Կիլիկյան Հայաստանը նպատակահարմար գտավ իր հպատակությունը հայտնել մոնղոլներին: Այս ընթացքում Եգիպտոսում տապալվեց Այյուբյանների դինաստիան, և երկրում իշխանության ղեկն իրենց ձեռքը վերցրին Մամլուքները: Իրանի վերջնական նվաճումից հետո պատմական թատերաբեմ ելավ մեկ այլ պետական կազմավորում՝ մոնղոլական Իլ-խանությունը: Այս երկու հզոր տերությունների ռազմաքաղաքական հակամարտության ոլորտում ակնհայտ դարձան Հայոց թագավորության որդեգրած արտաքին քաղաքական ուղեգծի առանձնահատկությունները՝ իրենց արտահայտությունը գտնելով ժամանակի մամլուքյան և իլ-խանական պատմագրական երկերում:

**Բ.** Կիլիկյան Հայաստանի պատմության մամլուքյան սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը Հայաստանում ձևավորված ավանդույթ չունի: Մեր օրերում այս ոլորտը շարունակում է մեծամասամբ խոպան մնալ. մամլուքյան պատմագրության հայերեն թարգմանված սկզբնաղբյուրները քիչ են, եղածներն էլ վերջին հիսնամյակի ընթացքում հրատարակված սկզբնաղբյուրների լույսի տակ նորովի ընթերցվելու կարիք ունեն: Ուստի ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր և պարսկագիր հեղինակների երկերի հետազոտությունը խիստ կարևոր է արևելամիջերկրածովյան և մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ուժերի թատերաբեմում Կիլիկյան Հայաստանի ունեցած դերն ու միջազգային կշիռը սահմանելու և ոչ քրիստոնեական ուժերի՝ առանձնապես Իկոնիայի Սելջուկյան սուլթանության, Մամլուքյան սուլթանության և մոնղոլական Իլ-խանության հետ նրա փոխհարաբերությունների նրբերանգներն ընկալելու առումով: Հայոց աշխարհիկ և հոգևոր բարձրագույն իշխանություններին տրված takfūr և ḫalīfa



տիտղոսները դրա վառ ապացույցն են: Ճիշտ է՝ պարսկագիր հեղինակները անհամեմատ ավելի «ժլատ» են Հայոց թագավորությանն ու հայերին վերաբերող հաղորդումների հարցում, սակայն հնարավորություն են տալիս լրացումներ և երբեմն նաև ճշտումներ մտցնել մամլուքյան աղբյուրներից քաղված պատմագրական նյութում:

**Գ.** Ալ-Մակրիզին մամլուքյան պատմագրության խոշորագույն ներկայացուցիչներից է: Նրա Kitāb al-sulūk երկը երկար ժամանակ բացառիկ և անփոխարինելի աղբյուր է համարվել Մամլուքյան սուլթանության պատմության ուսումնասիրության համար: Սակայն, մամլուքյան նորանոր աղբյուրների հրատարակությունը ի ցույց է դրել ալ-Մակրիզի պատմագրական «մեթոդի» կարևորագույն թերությունը՝ իր օգտագործած աղբյուրները չհիշատակելու (թաքցնելու) և այս կամ այն հեղինակից փոխառած վկայություններն ու հաղորդումներն ամփոփելու, համառոտելու նրա սովորությունը, ինչը երբեմն անճշտությունների և հաղորդումների իրական բովանդակության աղավաղման պատճառ է դարձել: Ալ-Մակրիզին «բանաքաղ» հեղինակ է, բայց նրա երկը հասարակ «քաղագրություն» համարել չի կարելի: Անկախ ժամանակակից հետազոտողների քննադատական հայացքներից՝ նույնիսկ մամլուքյան պատմության վաղ շրջանի անցքերի առնչությամբ ալ-Մակրիզի պատմության մեջ քիչ չեն այնպիսի հաղորդումները, որ չեն հանդիպում ոչ մի այլ աղբյուրում:

**Դ.** Ալ-Մակրիզի Kitāb al-sulūk երկը կարևոր սկզբնաղբյուր է Հայոց թագավորության պատմության և մասնավորապես վերջինիս և Մամլուքյան սուլթանության քաղաքական առնչությունների ուսումնասիրության համար: Սա, բնավ, չի նշանակում, որ այն Կիլիկիայի պատմության «ինքնաբավ» սկզբնաղբյուր է: Օրինակ, 1250-1260 թթ. իրադարձությունների՝ ի մասնավորի հայ-մոնղոլական դաշինքի ձևավորման, Սմբատ Սպարապետի և Հեթում Ա-ի Կարակորում կատարած այցերի, իլ-խան Հուլաղուի ասորիքյան արշավանքներին հայերի բերած մասնակցության, հայ-մամլուքյան առաջին շփումների և ռազմաքաղաքական հակամարտության սկզբնավորման վերաբերյալ Kitāb al-sulūk-ի ներկայացրած տեղեկությունները խիստ սուղ են: Այս անցքերի մասին հայ մատենագրության մեջ պահպանված վկայությունները լրացվում են մասնավորապես իբն ալ-Ամիրի, իբն Վասիլի, իբն ալ-Ֆուվատիի, Բար Հեբրեսուի («Ժամանակագրության» ասորական և արաբական խմբագրություններ), Իզզ ալ-Դին իբն Շադդադի, Իրանի մոնղոլական Իլ-խանության և Իկոնիայի սուլթանության պարսկագիր պատմիչներ Ջուվայնիի, Ռաշիդ ալ-Դինի և իբն Բիբիի հաղորդած արժեքավոր մանրամասներով: Հուլաղուի ասորիքյան արշավանքի արդյունքում հայոց թագավորության ձեռք բերած տարածքային նվաճումների մասին էլ ուշագրավ տեղեկություններ են հաղորդում մամլուքյան պատմիչները (ալ-Ջազարի, ալ-Նուվայրի, իբն ալ-Դավադարի, ալ-Ջահաբի, իբն ալ-Ֆուրաթ, ալ-Այնի և այլք):

**Ե.** Ալ-Ջահիր Բայբարս սուլթանի գահակալության սկզբից արդեն Kitāb al-sulūk-ը հանդես է գալիս որպես հայոց թագավորության պատմության հիմնական սկզբնաղբյուրներից մեկը: Պատճառը պիտի տեսնել հեղինակի

ընտրած ու օգտագործած աղբյուրներում, որոնք նա երբեք չի մատնանշում: 1260-1270 թթ. հայ-մավրքյան հարաբերությունների վերաբերյալ արաբագիր մատենագիրների հայտնած տեղեկությունների համեմատական և զուգահիշ քննությունը ցույց է տալիս, որ գոնե Բայբարսի կառավարման ժամանակաշրջանի համար ալ-Մակրիզիի համար անմիջականորեն թե միջնորդաբար (խոսքը մասնավորապես իբն ալ-Ֆուրայթի *Tārīḥ al-Duwal wa-l-mulūk*-ի մասին է) աղբյուր է ծառայել Բայբարս ալ-Բունդուկտարիի կենսագիր իբն Աբդ ալ-Չահիրի *al-Rawḍ al-zāhir* երկը: Հետումի ասորիքյան առաջին արշավանքի մասին ալ-Մակրիզիի հայտնած տեղեկությունից երևում է, որ *Kitāb al-sulūk*-ի հեղինակը զուգահեռաբար նաև այլ աղբյուրներ է ունեցել ձեռքի տակ: Ալ-Մակրիզին, սակայն, հետևողական չէ իր ընտրած աղբյուրների օգտագործման խնդրում: Իրենից առաջ ապրած հեղինակների վկայությունները համառոտելու, համադրելու և վերաշարադրելու նրա «հեղինակային մեթոդի» պատճառով Կիլիկյան Հայաստանին վերաբերող իրադարձությունների բազմաթիվ արժեքավոր մանրամասներ տեղ չեն գտել *Kitāb al-sulūk*-ում: Մավրքների առաջին «կիլիկյան» արշավանքի, Լևոն արքայազնի գերեզմարության, Հետում-Բայբարս բանակցությունների, Սունկուր ալ-Աշկարիի հետ Լևոնի փոխանակության մասին ալ-Մակրիզիի հայտնած տեղեկությունների մանրամասները (*al-Rawḍ al-zāhir*-ից բացի) լրացվում են հիմնականում Իզզ ալ-Դին իբն Շադդադի, Բար Հեբրեոսի, ալ-Յունիսիի, Շաֆի իբն Ալիի, Աբու ալ-Ֆիդայի, Բայբարս ալ-Մանսուրիի, իբն Աբդ ալ-Ռահիմի, Կիրտայ ալ-Խազինդարիի, ալ-Նուվայրիի, իբն Քասիրի և այլոց երկերից:

**2.** Ալ-Մակրիզիի «աշխատածի» առանձնահատկությունները առավել ցցուն են հայոց հայրապետանիստ Հռոմկլայի գրավմանը նախորդած և բուն գրավման հանգամանքների մասին նրա և մավրքյան մյուս պատմիչների հայտնած տեղեկությունների բաղդատական քննությունից: Նրա վկայությունների և իբն ալ-Ֆուրայթի երկի համապատասխան հատվածների նմանությունն ակնհայտ է: Սակայն մատենագիրը հաճախ հետևողական չէ իր շարադրանքում. միտումով թե անփոփոթեն իր երկից դուրս է թողնում անգամ առանձին հաղորդումների մասեր: Հայոց կաթողիկոսանիստի առման մասին *Kitāb al-sulūk*-ում տեղ գտած սեղմ նկարագրությունը լավագույնս է արտահայտում նրա հեղինակի «պատմագրական մեթոդի» թույլ կողմերը: Ալ-Մակրիզին, օրինակ, չի պահպանել Հռոմկլայի գրավման առթիվ սուլթան ալ-Աշրաֆ Խալիլի հղած ավետիս-նամակները: Առհասարակ, վավերագրերի նկատմամբ ալ-Մակրիզիի ցուցաբերած «անտարբերությունը» կարծես թե բնորոշ գիծ է *Kitāb al-sulūk*-ի համար: Ուստի 1292 թ. դեպքերի մասին հայկական աղբյուրներից հայտնի տեղեկությունները խիստ թերի կլինեին առանց մյուս մավրքյան պատմիչների՝ մասնավորապես բերդի պաշարմանը մասնակցած մավրք Անանուն հեղինակի, Աբու ալ-Ֆիդայի, Բայբարս ալ-Մանսուրիի, ինչպես նաև ալ-Ջազարիի, իբն ալ-Դավադարիի, ալ-Նուվայրիի, իբն Աբդ ալ-Ռահիմի, իբն Քասիրի, իբն ալ-Ֆուրայթի, ալ-Այնիի և այլոց հայտնած մանրամասների:

Է. Մամլուքյան պատմագրության կարևորությունը հայոց թագավորության պատմության և հայ-մամլուքյան հարաբերությունների ուսումնասիրության համար բացահայտ է նաև 1304-1310 թթ. իրադարձությունների դեպքում, մանավանդ որ հիշյալ ժամանակամիջոցի համար խիստ սահմանափակ են հայկական աղբյուրները: Իրն ալ-Ֆուրաթի պատմության հիշյալ շրջանն ընդգրկող մասը կորած է, ինչը դժվարեցնում է Kitāb al-sulūk-ի և մյուս մամլուքյան սկզբնաղբյուրների փոխկապակցվածության ճշտումը: Ինչևէ, 1304 և 1305/1306 թվականների մամլուքյան արշավանքների, 1307 թ. մոնղոլ զորավար Բիլարդուի կողմից հայոց արքա Լևոն Գ-ի և «ավագ պարոն» Հեթումի սպանության, հայ-մամլուքյան հակամարտ հարաբերություններում հաստատված հարաբերական խաղաղության մասին ալ-Մակրիզիի հայտնած տեղեկությունները լրացվում են գլխավորապես Բայբարս ալ-Մանսուրիի, ալ-Յունինիի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Նուվայրիի, իրն ալ-Դավադարիի, ալ-Բիրզալիի և այլոց երկերից:

Ը. Այսպիսով, հայ-մամլուքյան հարաբերությունների ամբողջական ու համապարփակ պատկեր ստանալու համար առանձին մուսուլման հեղինակների երկերի հետազոտությունը բավարար չէ: Անհրաժեշտ է հետազոտության ոլորտ ներգրավել ողջ մամլուքյան մատենագրությունը՝ արաբալեզու սկզբնաղբյուրներից քաղված պատմական նյութը համադրելով ու զուգարդելով ժամանակի հայ և այլ օտար աղբյուրների հայտնած տեղեկությունների հետ: Տարակույս չկա, որ Կիլիկիայի հայոց թագավորության պատմության մուսուլմանական աղբյուրների ուսումնասիրության լեզվական խոչնդոտը հաղթահարելու և ոլորտում շրջադարձ մտցնելու համար արևելագետների և հայագետների միահամուռ ջանքեր են հարկավոր, և գոյություն ունեցող խնդիրը հավասարապես նաև հայ արևելագիտությանն է:

#### **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

1. Մլեհ իշխանի գործունեությունը ԺԲ-ԺԵ դարերի արաբ պատմագիրների գնահատմամբ // Հայաստանը և արաբական աշխարհը: Պատմություն և արդի խնդիրներ (Արամ Տեր-Ղևոնդյանի 85-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2014, էջ 74-93:
2. Հռոմկլայի հայրապետական աթոռի պատմության արաբական սկզբնաղբյուրները // Բանբեր հայագիտության, № 2-3 (5-6), Երևան, 2014, էջ 182-199:
3. Մամլուքյան սուլթանության և Կիլիկյան Հայաստանի հակամարտության ակունքները (արաբական աղբյուրների քննություն) // ՎԷՄ համահայկական հանդես, № 1 (49), հունվար-մարտ, 2015, էջ 141-154:
4. Ալ-Մակրիզիի պատմագրական ժառանգությունը // Էջմիածին (Պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածին), 2015 (Ա), էջ 59-69:
5. The Title T'agavor/Takfūr in the Medieval Muslim Historiography // Revue des Études Arméniennes, № 36, Paris, 2014-2015, pp. 61-80.

**ДАНИЕЛЯН ГАГИК ГАРНИОВИЧ**  
**СОЧИНЕНИЕ АЛ-МАКРИЗИ «КИТАБ АЛ-СУЛУК» КАК ИСТОЧНИК ПО**  
**ИСТОРИИ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ 1250-1310 ГГ.**  
**(ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ)**

**Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05- «Историография, источниковедение».**

**Защита состоится 30-го июня, 2015 г., в 13:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. М. Баграмяна, 24/4.**

**РЕЗЮМЕ**

Подводя итоги проделанной в диссертации работы, можно прийти к следующим основным выводам.

1. Для исследования истории Киликийской Армении, кроме средневековых армянских источников, неценимое значение имеют также иностранные первоисточники. Особенно это выражается для отрезка времени, охватывающего 1250-1310 гг., который вероятно является наиболее хорошо освидетельствованным в мусульманских источниках периодом истории Киликийской Армении, обусловленной степенью вовлеченности армянского государства в политических процессах региона и активной ролью, принятой на себя более чем когда-либо.

В 40-50-х годах 13-го века, после покорения монголами закавказских и малоазиатских территорий, опасность нашествия новых завоевателей стала надвигающейся угрозой также и для Армянского царства. В создавшейся ситуации Киликийская Армения нашла целесообразным заявить о своей подчиненности монголам. В этот период в Египте была свергнута династия Айюбидов и власть в стране взяли Мамлюки. А после окончательного завоевания Ирана, на историческую арену взошла еще одна политическая сила – государство Хулагуидов (государство Ильханов). В рамках военно-политического противостояния двух этих мощных держав, стали очевидны особенности внешнего политического пути, заимствованного Армянским царством, которое нашло свое выражение в мамлюкской и ильханской историографии того времени.

2. Исследование мамлюкских источников истории Киликийской Армении еще не имеет сформировавшуюся традицию в Армении. В наши дни эта область в большей её части продолжает оставаться неизученной; переведенные на армянский язык мамлюкские первоисточники малочисленны и, в свете опубликованных в течение последнего пятидесятилетия первоисточников, нуждаются в повторном чтении. Поэтому, исследование исторических сочинений арабоязычных и персидскоязычных авторов 13-16-х веков является очень важным для установления имеющейся роли и

международного влияния Киликийской Армении на арене политических сил восточносредиземноморского и ближневосточного регионов и понимании нюансов ее взаимоотношений с нехристианскими силами, в особенности с Иконийским султанатом, Мамлюкским султанатом и хулагуидским Ираном. Данные армянским светским и духовным властям титулы такфур (takfūr) и халифа (ḫalīfa) являются ярким доказательством этого. Правда, персидскоязычные авторы несравнимо более «скупы» в сообщениях относящихся к Армянскому королевству и армянам, но в их сочинениях также находятся ценные свидетельства, которые дают возможность вносить дополнения, а порой и уточнения в исторические материалы, черпанные из мамлюкских первоисточников.

3. Ал-Макризи является одним из крупнейших представителей мамлюкской историографии. Его сочинение под названием «Китаб ал-сулук» долгое время считалось исключительным и незаменимым источником для изучения истории Мамлюкского султаната. Однако, опубликование других мамлюкских источников, выявило важнейшие изъяны исторического метода ал-Макризи: в неупоминании (утаении) использованных им источников, в обобщении и сокращении свидетельств, заимствованных у того или иного автора, что иногда стало причиной неточностей и искажения истинного содержания исторических сообщений. Таким образом, ал-Макризи «автор-компилятор», однако его сочинение нельзя считать обыкновенной «компиляцией». Вне зависимости от критических взглядов современных исследователей, даже в отношении событий мамлюкской истории раннего периода в «Китаб ал-сулук»-е не малочислены такие сообщения, которые не встречаются ни в одном другом источнике.

4. Сочинение ал-Макризи «Китаб ал-сулук» является важным источником для исследования истории Армянского царства и, в частности, политико-дипломатических отношений последнего с Мамлюкским султанатом. Это вовсе не означает, что оно является «самодостаточным» первоисточником истории Киликии. Например, о событиях 1250-1260 гг. представленные в «Китаб ал-сулук»-е сведения о Киликийском армянском королевстве строго ограничены. Данные об этих событиях дополняются, в частности, ценными подробностями, переданными ибн ал-Амидом, ибн Василом, ибн ал-Фувати, Бар-Эбреем (сирийские и арабские редакции «Хроники»), Изз ал-Дином ибн Шаддадом, а также пишущих на персидском историков государства Хулагуидов и Иконийского султаната Джувейни, Рашид ал-Дина и ибн Биби. Примечательные сведения о территориальных завоеваниях, приобретенных Армянским королевством в результате сирийской кампании Хулагу, передают мамлюкские историки (ал-Джазари, ал-Нувайри, ибн ал-Давадари, ал-Захаби, ибн ал-Фурат, ал-Айни и другие).

5. С начала воцарения султана ал-Захира Бейбарса «Китаб ал-сулук» уже выступает в качестве одного из основных арабских первоисточников истории Армянского царства. Причина в выбранных и использованных автором

источниках, на которые он никогда не указывает. Тем не менее, о армяно-мамлюкских отношениях в 1260-1270 гг. сравнительное и параллельное исследование сведений, заявленных пишущими на арабском историками, показывает, что хотя бы для периода правления Бейбарса для ал-Макризи непосредственно или посредственно (речь, в частности, о «Тарих ал-дувал вал-мулук»-е ибн ал-Фурата) послужило источником труд биографа султана Бейбарса ал-Бундуктари ибн Абд ал-Захира «ал-Рауд ал-Захир». Из заявленных ал-Макризи сведений о первом сирийском походе Хетума видно, что автор «Китаб ал-сулук»-а одновременно под рукой имел также другие источники, из которых пытался внести определенные дополнения. Ал-Макризи, однако, не последователен в использовании выбранных им источников. По причине его «авторского метода» сокращения, сопоставления и переизложения сведений живших до него авторов многочисленные ценные подробности не нашли место в «Китаб ал-сулук»-е. Подробности сведений этих и последующих событий, заявленных ал-Макризи, в основном дополняются (кроме «ал-Рауд ал-Захир»-а) из сочинений Изз ал-Дина ибн Шаддада, Бар-Эбрея, ал-Юнини, Шафи' ибн Али, Абу ал-Фиды, Бейбарса ал-Мансури, ибн Абд ал-Рахима, Киртая ал-Хазиндари, ал-Нувайри, ибн Касира и других.

6. Особенности «исторического метода» ал-Макризи больше выдвигаются из сравнительного рассмотрения сведений о предшествовавших завоеванию резиденции армянского католикоса Ромклы и непосредственно обстоятельствах завоевания, заявленных им и другими мамлюкскими историками. Схожесть его свидетельств и соответствующих отрывков сочинения ибн ал-Фурата очевидна. Однако историк зачастую не последователен в своем изложении и умышленно или небрежно упускает из своего сочинения даже отдельные части сообщений. Краткое описание о взятии резиденции Армянского католикосата, нашедшее место в «Китаб ал-сулук»-е, в наилучшей степени выражает слабые стороны «историографического метода» его автора. Ал-Макризи, например, не сохранил письма, отосланные султаном ал-Ашраф Халилом по поводу занятия Ромклы. И вообще, «безразличность», оказанная ал-Макризи в отношении документов, похоже, что в особенности является характерной чертой для «Китаб ал-сулук»-а. Поэтому известные из армянских источников сведения о событиях 1292 г. были бы неполными без сообщений других мамлюкских историков, в частности включением подробностей, заявленными Анонимным мамлюкским летописцем 14 века, Абу ал-Фидой, Бейбарсом ал-Мансури, бывшими очевидцами и участниками осады крепости, а также ал-Джазари, ибн ал-Давадари, ал-Нувайри, ибн Абд ал-Рахимом, ибн Касиром, ибн ал-Фуратом, ал-Айни и другими.

7. Важность мамлюкской историографии для изучения истории Армянского царства и армяно-мамлюкских отношений очевидна также в случае событий 1304-1310 гг., особенно из-за того, что армянские источники по упомянутому периоду времени строго ограничены. Утеряна часть истории

ибн ал-Фурата, охватывающая упомянутый период, что усложняет уточнение взаимосвязанности «Китаб ал-сулук»-а и других мамлюкских первоисточников. Тем не менее, заявленные ал-Макризи свидетельства о нашествии мамлюков 1304 и 1305/1306 годов, убийстве в 1307 г. армянского царя Левона III-го и «старшего господина» Хетума монгольским военачальником Биларгу, относительно мире, утвержденном в противоборствующих армяно-мамлюкских отношениях, дополняются главным образом из сочинений Бейбарса ал-Мансури, ал-Юнини, Абу ал-Фиды, ал-Нувайри, ибн ал-Давадари, ал-Бирзали и других.

**8.** Таким образом, для получения целостной и всеобъемлющей картины армяно-мамлюкских отношений, исследование отдельных сочинений мусульманских авторов не достаточно. Необходимо привлечь в область исследования всю мамлюкскую историографию, обобщив исторический материал, собранный из арабоязычных первоисточников, и сопоставив со сведениями, заявленными армянскими и иными иностранными источниками того времени. Нет сомнения, что для преодоления языкового барьера в исследовании мусульманских источников истории Киликийского армянского царства и внедрения в области перелома, нужны совместные усилия востоковедов и армяноведов, и, существующая проблема в равной степени также является проблемой армянского востоковедения.

**GAGIK G. DANIELYAN**  
**AL-MAQRĪZĪ'S KITĀB AL-SULŪK AS A SOURCE FOR THE HISTORY OF**  
**CILICIAN ARMENIA IN 1250-1310 (SOURCE STUDY EXAMINATION)**

**The defense of the dissertation will take place at 13:00, on 30th of June of 2015, the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.**

**Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.**

**The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "Historiography, Source Studies" 07.00.05.**

### **SUMMARY**

The work described in this thesis can be summed up in the following conclusions:

1. For the study of the history of Cilician Armenia, apart from medieval Armenian historiography, foreign sources are also of invaluable importance. This is especially pronounced for the period covering 1250-1310, which is probably the most well-documented period of the history of Cilician Armenia in Muslim historiography, accounted for by the degree of involvement of the Armenian state in the regional political processes and the assumed role which was more active than ever.

In the 40-50s of the 13th century after the subjugation of territories of Transcaucasia and Asia Minor by the Mongols, the risk of invasion by the new conquerors became an imminent threat for the Armenian kingdom as well. In the current situation, Cilician Armenia opted to announce its submission to the Mongols. During this period, the Ayyūbid dynasty was overthrown and the Mamlūks seized the power in Egypt. After the final conquest of Persia, another great political power came into existence in the region - the Mongol Il-khanate. Within the framework of the military conflict between these two powerful states, the specificity of the foreign policy adopted by the Armenian Kingdom became apparent, finding expression in Mamlūk and Il-khanid historiography of the time.

2. The study of the Mamlūk primary sources of the history of Cilician Armenia doesn't have an established tradition in Armenia yet. Nowadays, this topic still remains largely unexplored. The primary sources of Mamlūk historiography translated into Armenian are few, those that are available need to be reread under the light of the sources published during the last fifty years. Therefore, the study of Arabic and Persian authors' works of the 13-16 centuries is of vital importance to define the international weight of the Armenian kingdom in the arena of the Eastern Mediterranean and Middle East political powers and for the perception of the nuances of its relationship with non-Christian forces, especially the Seljuk Sultanate of Iconium, the Mamlūk Sultanate and the Mongol Il-khanate. The titles



of *takfūr* and *ḫalīfa* attributed to Armenian temporal and spiritual highest authorities come to prove the above mentioned. It is true that Persian authors are rather "stingy" with the reports related to the Armenian kingdom and the Armenians, but there are also valuable evidences in their works which allow to fill or make corrections in the historical material provided by the Mumlūk sources.

3. Al-Maqrīzī is one of the foremost representatives of the Mumlūk historiographical tradition. His chronicle *Kitāb al-sulūk* has long been considered a unique and indispensable source for the history of the Mumlūk period. However, the publication of new Mamlūk sources has brought to light the critical defect of his "historical method", i.e. his habit of not mentioning (hiding) the sources he used as well as summarizing, mixing and rewriting the reports taken from other authors has sometimes resulted in inaccuracy and distortion of the real content of the reports. Thus, al-Maqrīzī is a "compiler-historian", but his work cannot be considered a simple "compiling". Despite the critical views of contemporary researchers, in the chronicle of al-Maqrīzī the number of reports in relation to the events of the early period of Mumlūk history is not small which cannot be found in any other source.

4. Al-Maqrīzī's *Kitāb al-sulūk* is an important source for the history of the Armenian kingdom and in particular for the study of its political and diplomatic relations with the Mamlūk Sultanate. This does not mean that it's a comprehensive source of the history of Cilician Armenia. For example, the information about the Armenian Kingdom of Cilicia presented in *Kitāb al-sulūk* in relation to the events of 1250-1260, is strongly scarce. The reports about these events are mainly filled by the valuable details presented by ibn al-'Amīd, ibn Wāṣil, ibn al-Fuwaṭī, Bar Hebraeus (Syriac and Arabic versions of his chronicle), 'Izz al-Dīn ibn Ṣaddād, Persian historians of the Mongol Il-khanate of Iran and the Seljuk Sultanate of Iconium such as Ğuwaynī, Raṣīd al-Dīn and ibn Bībī. Remarkable information about the territorial achievements of the Armenian kingdom in result of Hulagu's Syrian campaign is provided by Mamlūk historians (al-Ġazarī, al-Nuwayrī, ibn al-Dawādārī, al-Ḍahabī, ibn al-Furāt, al-'Aynī and others).

5. From the beginning of sultan al-Zāhir Baybars's reign *Kitāb al-sulūk* stands as one of the main Arabic sources of the history of the Armenian kingdom. This can be accounted for by the author's choice of the sources which he always failed to mention. However, the comparative and parallel analysis of the information provided by the Arabic-writing chroniclers on the Armenian-Mamlūk relations of 1260-1270 reveals that at least for the period of Baybars's reign his biographer ibn 'Abd al-Zāhir's work called *al-Rawḍ al-zāhir* directly or indirectly (this, in particular, concerns ibn al-Furāt's *Tārīḫ al-Duwal wa-l-mulūk*) served as a source for al-Maqrīzī. The account of Hetum's first Syrian expedition provided by al-Maqrīzī reveals that the author had other sources at hand in parallel and used them to make some additions. Al-Maqrīzī, however, is not consistent in the way he uses the sources selected by him. As a result of his "method" of epitomizing, synthesizing and rewriting of reports of the authors who lived before him many

valuable details concerning the events of Cilician Armenia were not included in *Kitāb al-sulūk*. The details of the information provided by al-Maqrīzī are mainly filled (except *al-Rawḍ al-zāhir*) by the works of ‘Izz al-Dīn ibn Šaddād, Bar Hebraeus, al-Yūnīnī, Šafī’ ibn ‘Alī, Abū al-Fidā’, Baybars al-Manšūrī, ibn ‘Abd al-Raḥīm, Qirtāy al-Ḥazindārī, al-Nuwayrī, ibn Kaṭīr and others.

6. The peculiarities of al-Maqrīzī’s working method become more salient from the comparative study of the information provided by him and other Mamlūk historians on the circumstances preceding the conquest of the Armenian Patriarchal seat in Hromkla and the conquest itself. The similarity between his reports and relevant sections of ibn al-Furāt’s work is obvious. However, the historian is often inconsistent in his writing and deliberately or carelessly leaves out separate parts of reports. The brief narrative of the capture of the patriarchal see in *Kitāb al-sulūk* is the best expression of the weak points of the author’s writing. Al-Maqrīzī, for example, didn’t cite the letters about the conquest of Hromkla sent by sultan al-Ašraf Ḥalīl. And on the whole, al-Maqrīzī’s “indifference” to documents is a characteristic trait of *Kitāb al-sulūk* in general. Therefore, the information about the events of 1292 obtained from Armenian sources would be extremely incomplete without the involvement of the details provided by other Mamlūk historians, in particular, the anonymous Mamlūk chronicler of 14 century, Abū al-Fidā’, Baybars al-Manšūrī who had witnessed and participated in the siege and conquest of the fortress, as well as al-Ġazarī, ibn al-Dawādārī, al-Nuwayrī, ibn ‘Abd al-Raḥīm, ibn Kaṭīr, ibn al-Furāt and others.

7. The significance of Mamlūk historiography for investigation of the history of the Armenian kingdom and the Armenian-Mamlūk relations is also obvious in the case of the events of 1304-1310, especially for the reason that for the mentioned period the Armenian sources are extremely limited. The parts of ibn al-Furāt’s *Tārīḥ al-duwal* covering the mentioned period is lost which makes it difficult to check the interconnection between *Kitāb al-sulūk* and other Mamlūk sources. However, al-Maqrīzī’s accounts of Mamlūk expeditions of 1304 and 1305/1306, the murder of Armenian King Levon III and the “Great Baron” Het’um by Mongol commander Bilarghu, the relative peace established in Armenian-Mamlūk relations are completed mainly by Baybars al-Manšūrī’s, al-Yūnīnī’s, Abū al-Fidā’’s, al-Nuwayrī’s, ibn al-Dawādārī’s, al-Birzālī’s and others’ works.

8. Thus, to get a complete and comprehensive picture of the Armenian-Mamlūk relations, the study of certain works of Muslim authors is not enough. The whole Mamlūk historiography needs to be involved in the field of research, the historical material obtained from Arabic sources needs to be compared and combined with the information obtained from Armenian and other foreign sources of the time. Undoubtedly, to overcome the linguistic obstacle of the study of Muslim sources of the history of the Armenian Kingdom of Cilicia and to put a turn in the field there should be joint efforts of orientalists and armenologists and the existing problem equally belongs to Armenian Oriental studies.

